ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

«--» հունիսի 2011թ. N-Ա

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 6-Ի N14-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 5-րդ կետով և «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ կետով՝

Երևան քաղաքի ավագանին ***որոշում է.***

1. Հայաստանի Հանրապետության Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի հուլիսի 6-ի «Երևան համայնքին փոխանցված պետական կազմակերպությունը համայնքային կազմակերպության վերակազմակերպելու մասին» N14-Ա որոշման 2-րդ կետի բ/ ենթակետով հաստատված N 2 և գ/ ենթակետով հաստատված N 3 հավելվածները շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն N 1 և 2 հավելվածների:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ - ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

<<ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 6-Ի № 14-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի հուլիսի 6-ի N14 որոշման հավելված 2-ով հաստատվել էր <<Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ>> ՀՈԱԿ-ի կառուցվածքը և հավելված 3-ով՝ աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը: Երևանի 2011 թվականի բյուջեով <<Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ>> ՀՈԱԿ-ին հատկացվել է 100.0 մլն ՀՀ դրամ սուբսիդիա՝ 20.0 մլն ՀՀ դրամ պակաս 2010 թվականի և 50.0 մլն ՀՀ դրամ պակաս 2009 թվականի բյուջեների համեմատ: Միաժամանակ կրճատվել է <<Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ>> ՀՈԱԿ-ի կանոնադրությամբ սահմանված, կազմակերպության կողմից իրականացվող գործունեության՝ Երևանի քաղաքապետարանի պետական կառուցապատման, պետական ծրագրերի իրականացման ծավալները: Բացի այդ, հաշվի առնելով ճգնաժամը՝ Երևան քաղաքում կրճատվել են իրացման ծավալները: Նշված հանգամանքներից ելնելով՝ անհնարին է դառնում պահպանել կազմակերպության աշխատակիցներին ներկա թվաքանակով: Միաժամանակ, Հայաստանի Հանրապետությունում գործող ծրագրերի իրականացման գրասենյակների համեմատ կազմակերպության աշխատակիցների դրույքաչափերը նվազ է մոտ 2 անգամ, ինչի պարագայում հնարավոր չէ պահպանել մասնագետներին:

Հաշվի առնելով նշվածը՝ առաջարկվում է Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի հուլիսի 6-ի N14 որոշման N2-ը և 3-ը հավելվածները փոփոխել՝ շարադրելով նոր խմբագրությամբ:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 6-Ի № 14-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Հայաստանի Հանրապետության Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի հուլիսի 6-ի N14-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 6-Ի № 14-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Հայաստանի Հանրապետության Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի հուլիսի 6-ի N14-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեի եկամուտներում և ծախսերում փոփոխություններ չեն սպասվում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Հավելված 1
ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ
«___» _____ 2011 թ
հ. _____ որոշմամբ

Հավելված 2
ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ
«06» հուլիսի 2009թ
հ. 14-Ա որոշմամբ
Երևանի քաղաքապետ՝

հ/հ	«Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կառուցվածքը
1	2
1	Վարչատնտեսական աշխատակազմ
2	Իրավաբանական բաժին
3	Ֆինանսա-տնտեսագիտական բաժին
4	Կազմակերպչական բաժին
5	Հողի օտարման, վերաբնակեցման և մոնիտորինգի բաժին
6	Ծրագիրը համակարգող բաժին
7	Նախագծա-տեխնիկական բաժին
8	Շինարարության կազմակերպման և վերահսկողության բաժին

Հավելված 2
ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ
«___» _____ 2011թ
N _____որոշմամբ

Հավելված 3
ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ
«06» հուլիսի 2009թ
N14-Ա որոշմամբ

«Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության

Աշխատակիցների թվաքանակը

h/h	Հաստիքների անվանումը	Թվաքանակ
1	«Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության աշխատակիցներ	44

Հաստիքացուցակը

ՀՀ դրամ

h/h	Հաստիքների անվանումը	Միավորների քանակը	Մեկ միավորի ամսական պաշտոնային դրույքաչափը	Ընդամենը ամսական աշխատավարձը
1	*2*	*3*	*4*	*5*
	Վարչատնտեսական աշխատակազմ			
1	Տնօրեն	1	360 000	360 000
2	Տնօրենի առաջին տեղակալ	1	330 000	330 000
3	Տնօրենի տեղակալ	2	315 000	630 000
4	Տնօրենի խորհրդական	1	237 000	237 000
	Իրավաբանական բաժին			
1	Բաժնի պետ	1	265 000	265 000
2	Բաժնի պետի տեղակալ	1	237 000	237 000
3	Գլխավոր մասնագետ	1	237 000	237 000
4	Առաջատար մասնագետ	1	222 000	222 000
5	Առաջին կարգի մասնագետ	1	210 000	210 000
	Ֆինանսա-տնտեսագիտական բաժին			
1	Բաժնի պետ-գլխավոր հաշվապահ	1	275 000	275 000
2	Գլխավոր հաշվապահի տեղակալ	1	237 000	237 000
3	Գլխավոր մասնագետ	1	237 000	237 000
4	Հաշվապահ-գանձապահ	1	222 000	222 000
	Կազմակերպչական բաժին			
1	Բաժնի պետ	1	265 000	265 000
2	Կադրերի գծով մասնագետ	1	237 000	237 000
3	Առաջատար մասնագետ	1	222 000	222 000

4	Գործավար	2	140 000	280 000
5	Համակարգչային օպերատոր	2	120 000	240 000
6	Վարորդ	1	120 000	120 000
7	Հավաքարար	1	100 000	100 000
Հողի օտարման, վերաբնակեցման և մոնիտորինգի բաժին				
1	Բաժնի պետ	1	265 000	265 000
2	Գլխավոր մասնագետ	4	237 000	948 000
3	Առաջատար մասնագետ	3	222 000	666 000
4	Առաջին կարգի մասնագետ	2	210 000	420 000
Ծրագիրը համակարգող բաժին				
1	Բաժնի պետ	1	265 000	265 000
2	Գլխավոր մասնագետ	1	237 000	237 000
3	Առաջատար մասնագետ	3	222 000	666 000
Նախագծա-տեխնիկական բաժին				
1	Բաժնի պետ	1	265 000	265 000
2	Գլխավոր մասնագետ	1	237 000	237 000
3	Առաջատար մասնագետ	1	222 000	222 000
Շինարարության կազմակերպման և վերահսկողության բաժին				
1	Բաժնի պետ	1	265 000	265 000
2	Գլխավոր մասնագետ	1	237 000	237 000
3	Առաջատար մասնագետ	1	222 000	222 000
ԸՆԴՀԱՆՈՒՐ		**44**		**10 078 000**

Պաշտոնային դրույքաչափերը

Հազ. ՀՀ դրամ

հ/հ	**Հաստիքների անվանումը**	**Մեկ միավորի պաշտոնային դրույքաչափը**
1	Տնօրեն	360,0
2	Տնօրենի առաջին տեղակալ	330,0
3	Տնօրենի տեղակալ	315,0
4	Բաժնի պետ-գլխավոր հաշվապահ	275,0
5	Բաժնի պետ	265,0
6	Տնօրենի խորհրդական, բաժնի պետի տեղակալ,գլխավոր հաշվապահի տեղակալ, գլխավոր մասնագետ, կադրերի գծով մասնագետ	237,0
7	Հաշվապահ-գանձապահ, առաջատար մասնագետ	222,0
8	Առաջին կարգի մասնագետ	210,0
9	Գործավար	140,0
10	Համակարգչային օպերատոր, վարորդ	120,0
11	Հավաքարար	100,0